Համաշխարհային պատմություն

11-րդ հումանիտար դասարան

(շաբաթական՝ 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ)

Սովորողների պատրաստվածությանը ներկայացվող չափորոշչային պահանջները		
Դաս Ծրագիր	*Դասագիրք*	*Վերջնարդյունքներ*
N Ենթաթեմա	Պարագրաֆ, էջ	Դասի վերջում սովորողը կկարողանա՝
1.Ներածություն		
2.Խաչակիրների դարաշրջանը: Սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը	1,2,(էջ 10-20)Խաչակրաց արշավանքների պատճառները, խաչակրաց հետագա արշավանքները, միջնադարյան քաղաքը, ավատատիրական հասարակությունը	Ներկայացնել խաչակրաց արշավանքների նախադրյալներն ու նպատակները, բացատրել ավատատիրական հասարակության առանձնահատկությունները
3.Կենտրոնացված պետության կազմավորումը Ֆրանսիայում և Անգլիայում: Գերմանիան և Իսպանիան	3,4(էջ 20-28) Ֆրանսիայի և Անգլիայի միավորման սկիզբը: Գերմանական կայսրերի քաղաքականությունը, ռեկոնկիստա, Իսպանիայի միավորումը	Համեմատել Ֆրանսիայի և Անգլիայի միավորման գործընթացը, բացատրել բացարձակ միապետության և ռեկոնկիստայի առաջացման պատճառները

4. Պապականությունը 11-15-րդ դդ.: Միջազգային հարաբերությունները Եվրոպայում 11-15-րդ դդ.	5,6(էջ 29-36) Աստծո փոխանորդը երկրի վրա, Ժողովական շարժումը, միջազգային հարաբերությունները 11-15-դր դդ., Հարյուրամյա պատերազմը	Ներկայացնել պապականության վարած քաղաքականությունը, բացատրել Հարյուրամյա պատերազմի պատճառներն ու հետևանքները և Արևելք-Արևմուտք հարաբերությունները
5. Դասական միջնադարի մշակույթը: Վաղ վերածննդի մշակույթն Իտալիայում	7,8(էջ *36-43*) Կրթական համակարգը, պատմական ավանդույթը, Վաղ վերածննդի մշակույթի առաջացման նախադրյալները	Ներկայացնել միջնադարյան մշակույթի առանձնահատկությունները և ուղղությունները, բացատրել ինչ է վերածնունդը և նրա զարգացման ուղղությունները
6. Բյուզանդական կայսրության անկումը: Բյուզանդական մշակույթը 9-15-րդ դդ.	9,10(էջ *44-50*) 4-րդ խաչակրաց արշավանքը և Բյուզանդիան, Բյուզանդիայի անկումը, <<Մակեդոնական>> և <<Կոմնինոսյան>> վերածնունդները	Ներկայացնել Բյուզանդական կայսրության անկման պատճառները և ունեցած հետևանքները, բացատրել Մակեդոնական և Կոմնինոսյան վերածնունդները
7.Միջնադարյան քաղաքակրթությունը Ռուսիայում	11.(էջ *51-59*) Սոցիալական միջավայրի կազմակերպումը, Կիևյան Ռուսիայի կազմավորումը, ռուսական միասնական տերության առաջացումը	Ներկայացնել սլավոնական հասարակության զարգացման առանձնահատկությունները, գնահատել ռուս մեծ իշխանների վարած քաղաքականությունը պետության հզորացման գործում
8. Հինդու քաղաքակրթությունը: Չինական քաղաքակրթությունը միջնադարում	1,2,(էջ *59-69*) Սոցիալական միջավայրի կազմակերպումը, դասերը, քաղաքական միջավայրի կազմակերպումը, մշակույթը	Ներկայացնել և համեմատել Հինդու և չինական քաղաքակրթությունների առանձնահատկությունները,

		սոցիալական վիճակը և միավորման փորձերը
9. Ճապոնիան միջնադարում: Իսլամական քաղաքակրթությունը	3,4,(էջ *68-75)* Սոցիալական միջավայրի կազմակերպումը, մշակույթը, Արաբական խալիֆայություն, Իրանի իսլամացումը	Համեմատել ճապոնական և արաբական քաղաքակրթությունները, բացատրել ինքնամեկուսացումը և ազդեցությունը պետության զարգացման վրա
10.Քոչվորական քաղաքակրթությունները: Մինչկոլումբոսյան Ամերիկան	5,6,(էջ *75-84)* Անհանգիստ քոչվորները, հոներ, Մոնղոլական տերությունը, մայաներ, ացտեկներ, ինկեր	Համեմատել քոչվորական քաղաքակրթությունների տարբերությունները, ցույց տալ մինչկոլումբոսյան Ամերիկայի սոցիալական և մշակութային առանձնահատկությունները
11. Նոր Եվրոպայի ծնունդը	1,2(էջ *87-94*)Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքները, սոցիալ-քաղաքական միջավայրի վերակառուցումը	Ներկայացնել Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դրական և բացասական կողմերը, բացատրել ռեֆորմացիան և դրա ազդեցությունը
12. Արևմտյան Եվրոպայի մշակույթը: Աշխարհի քաղաքական քարտեզը 16-17-րդ դդ.	3,1(էջ *94-103*)Բարձր վերածնունդը և Հյուսիսային վերածնունդը, առաջին գիտական հեղափոխությունը: Եվրոպայի քաղաքական պատկերը	Ներկայացնել գիտական հեղափոխության նախադրյալները, բացատրել գաղութացման գործընթացի պատճառներն ու հետևանքները և աշխարհի քաղաքական փոփոխությունը
13.Արդյունաբերական քաղաքակրթության առաջացման նախադրյալները	2,1(էջ *104-111*) Հասարակական փոփոխությունները Եվրոպայում 16-17-րդ դդ., մարդկանց կյանքը Եվրոպայում,	Պարզել արդյունաբերական հեղափոխության նախադրյալները, բացատրել միահեծանության

Եվրոպայում: Արդյունաբերական հեղաշրջումը Եվրոպայում	արդյունաբերական հեղաշրջման նախադրյալները	պատճառները և արդյունաբերական հեղաշրջման հետևանքները
14. Արդյունաբերության կենտրոնացման և խոշորացման արդյունքները: Արդյունաբերական քաղաքակրթության առաջացման սոցիալական արդյունքները	2,3(էջ *112-119*)Գիտատեխնիկական մեծ թռիչքը 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին, արդյունաբերության կետրոնացումն ու խոշորացումը, նոր դասակարգերի և դասերի ձևավորումը	Ներկայացնել գիտության և տեխնիկայի առաջընթացի արդյունքներն ու հետևանքները և բացատրել արդյունաբերական քաղաքակրթության սոցիալական կողմը
15. Ժողովրդավարության հաստատման գործընթացը: Հասարակական-քաղաքական ուսմունքները և շարժումները	1,2,(էջ *120-127*) Լուսավորական շարժումը, սահմանադրական կարգի հաստատումը, ազատականություն, ազգայնականություն	Ներկայացնել հասարակական-քաղաքական ուսմունքների ուղղությունները և դրանց գաղափարախոսությունը
16. Սահմանադրական կարգի հաստատման Անգլիայի ուղին: Սահմանադրական կարգի հաստատման Ֆրանսիայի ուղին	3,4.(էջ127-132)Խորհրդարանական միապետության ստեղծումը, հասարակական-քաղաքական կյանքը, սահմանադրական կարգերի հաստատման սկիզբը	Ներկայացնել Ֆրանսիական մեծ հեղափոխության նախադրյալները, քննարկել ,,Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի,, պատմական նշանակությունը, վերլուծել այն գործոնները, որոնք նպաստում էին իշանափոխություններին հանրապետությունից կայսրություն, համեմատել կառավարման համակարգի այս ձևերը
17. Գերմանիա. Մասնատվածությունից մինչև միավորում: Ավստրո-Հունգարիան՝	5,6.(էջ 131-137)Գերմանական կայսրության ստեղծումը, Գերմանիան՝ սահմանադրական միապետություն, բազմազգ տերության պատմական ուղին:	Վերլուծել Բիսմարկի դերը Գերմանիայի միավորման գործում, ներկայացնել Գերմանիայի միավորման նախադրյալները և քննարկել

առանձնահատուկ սահմանադրական կայսրություն	ԱվստրոՀունգարիայի կազմավորումը, Ավստրո-Հունգարիայի քաղաքական կյանքը	միավորման նշանակությունը, համեմատել Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պետական կառավարման համակարգերը և ազգային հարցը ինչ դեր ունեցավ երկրի քաղաքական կյանքում
18. Իտալիա. Ազգային միասնության հաստատումը: Ազգային պետությունների առաջացումը, և արդիականացման գործընթացը Բալկանյան երկրներում	7,8.(էջ 138-145)Ազգային ինքնագիտակցության վերելքը, իտալական թագավորության ստեղծումը, ազգային պետությունների առաջացման նախադրյալները, նորանկախ պետությունների ասհմանադրական կարգը և արդիականացումը	Բացատրել Ռիսորջիմենտոն, ներկայացնել նրա ունեցած ազդեցությունը իտալական միավորման գործում, արժևորել Գարիբարդիի դերը Իտալիայի միավորման ընթացքում, իսկ Ներկայացնել լուսավորական գաղափարների ազդեցությունը ազգային պետությունների ստեղծման գործում
19. Ռուսական քաղաքակրթության զարգացման ուղին: Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջացումը	9,1.(էջ 145-154)Արդիականացման սկիզբը, ռուսական քաղաքակրթությունը 19-րդ դ., ԱՄՆ-ի պատմության գաղութային փուլը, անկախության պատերազմը և ԱՄՆ-ի առաջացումը	Թվարկել Պետրոս 1-ինի բարեփոխումները և բացատրել նրանց ազդեցությունը պետության հզորացման գործում, համեմատել ռուսական գաղափարական հոսանքները, վերլուծել ԱՄՆ անկախության հռչակագիրը և սահմանադրական գործընթացը
20. ԱՄՆ-ն 19-րդ դ. 1-ին կեսին, Քաղաքացիական պատերազմը: Արդյունաբերական քաղաքակրթության ձևավորումը ԱՄՆ-ում	2,3.(էջ 150-158)Հասարակական-քաղաքական զարգացումը, քաղաքացիական պատերազմը, արդյունաբերական մեծ թռիչքը,	Ներկայացնել ԱՄՆ քաղաքացիական պատերազմի պատճառները և հետևանքները, բացատրել ինչպես արդյունաբերական հեղաշրջումն ԱՄՆ

	հասարակության սոցիալական զարգացումը	տնտեսության վրա մեծ ազդեցություն ունեցավ
21. Անկախ պետությունների առաջացումը Լատինական Ամերիկայում: Օսմանյան կայսրությունը 17-րդ դ. մինչև 20-րդ դ. սկիզբը	4,1.(էջ 158-165)Լատինական Ամերիկայի անկախացումը, արդիականացումը, Օսմանյան կայսրության տրոհման սկիզբը, Օսմանյան կայսրությունը բարենորոգումների շրջանում	Համեմատել Լատինական Ամերիկայի երկրների զարգացման ընթացքը, ուսումնասիրել ,,Մոնրոյի ուսմունքը,,, բացատրել Աբդուլ Համիդի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ
22. Արաբական երկրները նոր ժամանակներում: Իրանը նոր ժամանակներում	2,3.(էջ 171-178)Նապոլեոնի եգիպտական արշավը, լուսավորչական շարժումը, Իրանը Ղաջարների իշխանության ներքո	Ներկայացնել արաբական երկրների անկախացման գործընթացը և Մուհամեդ Ալիի գաղափարները, Ներկայացնել Իրանի զարգացման ընթացքը և համեմատել այս երկրների զարգացման գործունեությունը
23. Չինաստանը, Ճապոնիան և արդիականացումը: Գաղութային համակարգի առաջացումը	4,1.(էջ 179-186)Չինաստանի ինքնահզորացման փորձերը, Ճապոնիան Արևելքի առաջին արդյունաբերական երկիր, գաղութային համակարգի բնորոշ կողմերը, եվրոպացիների գաղութային նվաճումները 17-18-րդ դդ.	Բացատրել Չինաստանի ինքնահզորացման քաղաքականությունը, ներկայացնել Ճապոնիայի արդիականացման քաղաքականությունը, համեմատել 2 երկրների զարգացման գործընթացը, վերլուծել գաղութացման գործընթացի առանձնահատկությունները և ստրկության վերացման դեմ պայքարը
24. Համաշխարհային գաղութային համակարգի կազմավորման ավարտը:	2,1.(էջ 187-195)Անգլիական վերաբնակեցված գաղութների ստեղծումը,	Ներկայացնել գաղութային համակարգի ստեղծման հետևանքները, բացատրել

Միջազգային հարաբերությունները նոր ժամանակներում	միջազգային համակարգի զարգացման փուլերը Նոր ժամանակներում	Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը և Նապոլեոնի գործունեությունը, վերլուծել նրա կատարած բարեփոխումները և հաջողության հասնելու քայլերը
25. Միջազգային հարաբերությունները 1814-1860-ական թթ.: Միջազգային հարաբերությունները 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին	2,3.(էջ 195-203)Վիեննայի համաժողովը և Սրբազան դաշինքի ստեղծումը, միջազգային հարաբերությունների զարգացման նոր դարաշրջանը, ռազմաքաղաքական դաշինքների կազմավորումը Եվրոպայում	Բացատրել Վիեննայի վեհաժողովի նշանակությունը, ներկայացնել Սրբազան դաշինքի գործունեությունը և վեհաժողովին տարաձայնությունների հետևանքները, գնահատել Հաագայի ժողովների նշանակությունը
26. Նվաճողական պատերազմները 19-րդ դ. Վերջին և 20-րդ դ. Սկզբին: Արդյունաբերական քաղաքակրթության մեծ ճգնաժամը	4,1.(էջ 204-211)Նոր դարերի պատերազմների բնույթը, արդյունաբերական քաղաքակրթության ճգնաժամը, 1-ին աշխարհամարտի մասնակիցների նպատակները	Բացատրել տեղական պատերազմների պատճառները և դրանց ազդեցությունը, ներկայացնել 1-ին աշխարհամարտի նախադրյալները և մասնակիցներից յուրաքանչյուրի նպատակները
27. Առաջին աշխարհամարտի ընթացքը Եվրոպայում 1914-1916թթ.: Առաջին աշխարհամարտը և Օսմանյան կայսրությունը	2,3.(էջ 212-219)Պատերազմի սկիզբը, ռազմական գործողությունները 1915-1916թթ., Օսմանյան տերության՝ պատերազմի մեջ մտնելու պատճառները	Ներկայացնել երկու ռազմաքաղաքական դաշինքների հակամարտությունները, ցույց տալ ռազմական գործողությունների ընթացքը, բացատրել երիտթուրքերի քաղաքականության ընթացքը և դրա ահռելի հետևանքները
28. Ռուսաստանը և քաղաքակրթական պառակտումը 1917թ.: Առաջին	4,5.(էջ 220-227)Տնտեսական և քաղաքական ճգնաժամը, Հոկտեմբերյան հեղաշրջման	Բացատրել ռուսական հեղափոխության նախադրյալները և հետևանքները, ներկայացնել առաջին աշխարհամարտի

աշխարհամարտի ավարտը և հանրագումարները	հետևանքը, Քառյակ միության պարտությունը	հետևանքները և փոփոխությունները աշխարհի քարտեզի վրա
29. Կրթությունը և գիտությունը նոր ժամանակներում: Գիտատեխնիկական հեղաշրջումը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին	1,2.(էջ 228-237)Կրթական համակարգը, դասական գիտության նվաճումները 19-րդ դ., տեխնիկայի գլխավոր նվաճումները	Ներկայացնել կրթության զարգացման նախադրյալները, բացատրել ինչ է գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա զարգացման գործոնները, թվարկել գիտական հայտնագործությունները և նրանց նշանակությունը
30. Գեղարվեստական մշակույթը 17-րդ դ.: Գեղարվեստական մշակույթը լուսավորության դարաշրջանում	3,4.(էջ 238-245)Բարոկկո ոճի կերպարվեստը, կլասիցիզմի գեղարվեստական ուղղությունը, երաժշտությունը	Թվարկել գեղարվեստական ուղղությունները և դրանց առանձնահատկությունները, կատարել համեմատություն ուղղությունների միջև
31. Գեղարվեստական մշակույթը ռոմանտիզմի դարաշրջանում	5.(էջ 246-249)Ռոմանտիզմի գեղագիտությունը, գեղանկարչությունը և երաժշտությունը	Թվարկել մշակույթի ուղղությունները և նրանց նշանավոր ներկայացուցիչներին
32. Ռեալիզմի գեղարվեստական մշակույթը 19-րդ դ: Մշակույթի ճգնաժամը	6.(էջ 220-253)Քննադատական ռեալիզմ, գրականությունը և արվեստը	Թվարկել մշակույթի ուղղությունները և նրանց նշանավոր ներկայացուցիչներին
33. Կրկնություն **34. Ամփոփում**		